# ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

**Իսկ որովհետև հրեայք նշան հայցեն և հեթանոսք իմաստութիւն խնդրեն, մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս, հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն:**
**Առ Կորնթացիս Ա. թուղթ 122—23:**

արմանալիորեն բեղմնավոր է եղել Պողոս առաքյալի կյանքը։ Երեքտասաներորդ առաքյալ, հեթանոսների առաքյալ— այսպես են անվանում նրան, որն իր ամբողջ կյանքն անց է կացրել հեթանոսների մեջ՝ նրանց դարձի բերելու համար. մի մըրկածին, ալեծուփ կյանք, լի ամեն տեսակի արկածներով. նեղություններով, դառնություններով, մինչև իսկ բազմիցս մահվան սպառնալիքի ենթակա, բայց առանց ընկճման, լքման ու հուսահատման։ Այն նոր. քրիստոնեական ուսմունքի սկզբունքները. որին ամբողջ հոգով ու սրտով նվիրվում է նա իր նշանավոր դարձից հետո, միշտ էլ ոգևորել ու պահապան հրեշտակի դեր են խաղացել նրա համար մինչև իսկ տանջանքների գագաթնակետին հասած ժամանակ։ Որքան ավելի է շատանում փորձությունը, հալածանքը, նա առավել համարձակությամբ ու համառությամբ է քարոզել տկսում Քրիստոսի վարդապետությունը և պերճախոս ճարտարությամբ ու զորեղ տրամաբանությամբ իր քարոզած սկզբունքները պաշտպանում։ Թե՛ թագավորի, թե՛ զինված հռոմայեցի հազարապետների ու հարյուրապետների, թե՛ կատաղած, մոլեռանդ հրյա ամբոխի, թե՛ Աթենքի այն ժամանակվա կիրթ հասարակության ու փիլիսոփաների առաջ, և թե՛ ցամաքի վրա կամ նավաբեկության պահին մրրկալի Միջերկրականի կատաղի ալիքների վրա, նա միշտ նույնն էր, երբեք իրեն չդավաճանող, նույն բյուրեղային համոզմունքներ տեր Պողոսը։ Իր անձնական գեղեցիկ օրինակով նա բազմապատկում էր իր քարոզած սկզբունքների վեհությունը։ Նա չերմ հավատացյալ էր, սիրո շտեմարան, ամեն տեսակի առաքինության ու բարեգործության պաշտպան, արքակենցաղ, աշխատանքի սիրահար, ծույլերին ու դատարկապորտներին խարազանող, ընտանեկան մաքուր կյանքը գովերգող, վանանց, ծառաների ու ստրուկների պաշտպան։

Պողոս առաքյալն իր բնական մահով չըմեռավ։

Նրա քարոզներն այնքան վեհ ու նոր էին, որ նրա մահվանից հետո չէին կարող անուշադրության, մոռացման ու մահացման ենթարկվել։ Պարարտ հողի մեջ նետած առողջ սերմերի նման այս նոր ուսմունքը արմատավորվեց և բոլոր խոչնդոտները հաղթահարելով չորրորդ դարու սկզբին դարձավ այն ժամանակվա առաջավոր մարդկության պետական պաշտոնական կրոնը։ Այսպիսով թեպետ Պողոս առաքյալն իր քարոզած սկզբունքների համար նահատակվեց, բայց թողեց մի անմոռաց անուն, որ ահա 19 դար շարունակ փայլում է մարդկության լավագույն անունների կողքին։ Այդ իսկ պատճառով արժե ծանոթանալ քրիստոնեության այս ժրաջան մշակի կյանքի ու գործունեության հետ, որի համար աղբյուր կարող են ծառայել Գործք Առաքելոցն ու հենց իր Պողոս առաքյալի թղթերը։

Պողոս առաքյալի սկզբնական անունը Սավուղ էր։ Առաջին անգամ նրա մասին Գործք Առաքելոցում հիշվում է, երբ պատմվում է Ստեփանոս Նախավկայի քարկոծումը։ Քարկոծողներն իրենց շորերն ի պահ են թողնում մի երիտասարդի մոտ, որի անունն էր Սավուղ. սա եվս կողմնակից էր նրա սպանմանը։ Երբ Երուսաղեմի նոր կազմված քրիստոնյա համայնքի դեմ մեծ հալածանք է սկսվում, այս Սավուղն էր հենց, որ տնե-տուն մտնում, նորահավատ

տղամարդկանց ու կանանց դուրս քաշում, տանում ու բանտն էր նետում։ Դրանով չբավականանալով Սավուղը հրեից քահանայապետից մի գրություն է վերցնում Դամասկոսի հրեաներին ուղղված և ուղևորվում Դամասկոս, որպեսզի թե այնտեղ և թե ճանապարհին հանդիպած հավատացյալներին ձերբակալի ու Երուսաղեմ բերի։ Դամասկոսի մոտ, երբ դեռ նա քաղաք չէր մտել։ հանկարծ նրա շուրջը երկնքից լույս է փայլատակում։ Գետնին փռվելով Սավուղը լսում է մի ձայն, որ նրան ասում էր.

—Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչու ես հալածում ինձ։

Սավուղը երկյուղած հարցնում է.

—Ո՞վ ես, Տե՛ր։

Ձայնը պատասխանում է.

— Ես այն Հիսուսն եմ, որին դու հալածում ես, ե՛լ, կանգնի՛ր և մտի՛ր այս քաղաքը ու քեզ կասվի, թե ինչ պետք է անես։

Ուղեկիցները անշշունչ նույնպես լսում էին այդ ձայնը։ Երբ Սավուղը գետնից բարձրանալով շուրջն է նայում, զգում է, որ կուրացել է։ Ուղեկիցները նրա թևերից բռնած Դամասկոս են մտնում։ Երեք օր այստեղ մնալով նա ոչ՝ տեսնում էր, ո՛չ ուտում և ո՛չ էլ խմում։ Դամասկոսում ապրող Անանիա անունով մի հավատացյալ աշակերտի Տիրոջ փողոցի տեսլյան մեջ ցուցում է տրվում, որ գնա Ուղիղ փողոցի Հուդայի ապարանքում իջևանած տարսոնացի Սավուղի մոտ։ Անանիան առ այս ասում է.

— Շատերից եմ լսել, այդ մարդու մասին, թե որքան չարիք է հասցրել քո հավատացյալներին Երուսաղեմում. այստեղ էլ եկել է քահանայապետի հրամանով, որպեսզի ձերբակալի բոլոր նրանց, որոնք հավատում են քեզ։

Տերը նրան ասում է.

— Գնա՛ դու, ինձ համար նա ընտրության անոթ է, թող կրի իմ անունը հեթանոսների, թագավորների և Իսրայելի որդիների առաջ, իսկ ես ցուց կտամ նրան, թե որչափ պիտի չարչարվի իմ անվան համար։

Անանիան գնում, գտնում է Սավուղին և ձեռքը նրա վրա դնելով ասում է.

— Սավուղ եղբա՛յր, վեր նայի՛ր, ինձ ուղարկեց Տերը, այն Հիսուսը, որ ճանապարհին երևաց քեզ. դու կտեսնես և կլցվես Սուրբ հոգով։

Սավուղի աչքերն անմիջապես բացվում են, նա ոտքի է կանգնում և մկրտվում։ Մի քանի օր Դամասկոսում հավատացյալների մոտ մնալուց հետո, նա շտապով ըսկսում է ժողովրդի մեջ քարոզել, որ Քրիստոս Աստուծո Որդին է։ Նրան լսողները ապշած հարցնում էին միմյանց, թե մի՞թե սա չէր, որ Երուսաղեմում բռնանում էր նրանց նկատմամբ. ովքեր Հիսուսի անունն էին տալիս և այստեղ էլ նույն նպատակով էր եկել, որպեսզի հավատացյալներին ձերբակալի, Երուսաղեմ տանի ու քահանայապետի ձեռքը մատնի։ Իսկ Սավղոսը (դարձից հետո միառժամանակ Սավուղը Սավղոս էր կոչվում) շարունակում էր Դամասկոսում ապրող հրեաներին քարոզել Քրիստոսի ուսմունքը։

Բավական ժամանակ անց հրեաները մտադրվում են նրան սպանել։ Սավղոսի նորադարձ աշակերտները նրա կյանքը փրկելու համար գիշերով քաղաքի պարիսպներից վանդակով ցած են իջեցնում նրան ու փախցնում։ Սավղոսը գալիս է Երուսաղեմ. նա աշխատում էր միշտ հավատացյալների շրջանում լինել, բայց ամենքն էլ վախենում էին նրանից, չէին հավատում, թե Քրիստոսի աշակերտ է դարձել։ Բայց Բառնաբասը, որ Հիսուսի աշակերտներին ամենաառաջին հարողներից մեկն էր, Սավուղի ձեռքից բռնելով բերում է առաքյալների մոտ ու պատմում նրանց Դամասկոսի ճանապարհին պատահած դեպքը և այն մասին, թե ինչպես հենց Դամասկոսում Սավղոսը համարձակություն է առնում և սկսում քարոզել Հիսուսի մասին։ Այնուհետև Սավղոսը միշտ առաքյալների հետ էր և շարունակ Տիրոջ մասին էր խոսում ու հույների հետ վիճում։ Վերջիններս էլ են խորհում սպանել նրան, բայց հավատացյալ եղբայրները իմանալով այդ բանը, նրան տանում են Պաղեստինի Կեսարիան, իսկ այնտեղից էլ Տարսոն՝ իր ծննդավայրը։

Մինչ այդ, Ստեփանոսի նահատակությունից հետո, շրջակա երկրներում ցրված հավատացյալները շարունակում են քարոզել ժողովրդին և ավետարանել Տեր Հիսուսի մասին. նրանց գործն այնքան հաջող է ընթանում, որ առաքյալներն անհրաժեշտ են համարում հատուկ մի մարդ ուղարկել Անտիոք վերահսկող լինելու դրան։ Այդ մարդը Բառնաբասն էր. տա Անտիոք հասնելով ու տեսնելով, որ Տիրոջ հավատացյալների թիվն անչափ շատացել է, սաստիկ ուրախանում է։ Ապա զգալով Սավղոսի բացակայությունը, ուղևորվում է Տարսոն, գտնում նրան այնտեղ ու նրա հետ միասին վերադառնում Անտիոք։ Սրանք երկուսով մի ամբողջ տարի մնում են Անտիոքում և անդադար ուսուցանում ժողովրդին ու առաջին

անգամ այստեղ նորադարձ հավատացյալներին քրիստոնյա անվանում։ Այդ ժամանակները մեծ սով էր տիրում աշխարհում. Անտիոքի հավատացյալներն օգնություն են կազմակերպում Հրեաստանում բնակվող իրենց եղբայրակիցների համար, այդ գործը հանձնելով Բառնաբասին ու Սավղոսին, որոնք Երուսաղեմ մեկնելով կատարում են իրենց վրա դրված պարտականությունը ու ապա նորից վերադառնում Անտիոք։

## ՍԱՎՂՈՍԻ (ՊՈՂՈՍԻ) ԱՌԱՋԻՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Այնուհետև Անտիոքի ազդեցիկ հավատացյալները որոշում են, որ Բառնաբասն ու Սավղոսը գնան և ամենուրեք քրիստոնեություն քարոզեն։ Նրանք երկուսով նախ գնում են Ծովափնյա Սելևկիա քաղաքը, իսկ ապա այնտեղից նավում են Կիպրոս։ Կիպրոսում ճանապարհորդելիս Սավղոսն արդեն սկսում է անվանվել Պավղոս-Պողոս։ Երբ հասնում են Պիսիդիայի Անտիոքը, հրեից ժողովարանում Պողոսը մի ոգեշունչ ճառ է արտասանում. համառոտակի հիշեցնելով հին ուխտից նահապետների, մարգարեների ու թագավորների կանխագուշակությունները գալիք Փրկչի մասին, բացատրում ու պարզաբանում է, որ այդ Փրկիչը հենց Հիսուս Քրիստոսն է, որին հրեաները մոտ անցյալում Պիղատոսի ձեռքով տարապարտուց դատապարտեցին, խաչեցին ու թաղեցին, բայց Աստուած նրան հարություն տվեց մեռելներից. շատերին երևաց նա և ամենից առաջ իր աշակերտներին, որոնք այժմ իսկ դրա վկաներն են ժողովրդի առաջ։ Այնուհետև հորդոր է կարդում, որ հավատան Հիսուսին։ Երբ դուրս են գալիս ժողովարանից, ժողովուրդը խրոնված նրանց հետևից գնում ու խնդրում էր, որ երկրորդ անգամ ևս խոսեն։ Պողոսն ու Բառնաբասը հարգելով ժողովրդի խնդիրը, հաջորդ շաբաթ օրը նորից գալիս են ժողովարան, որտեղ հավաքվել էր գրեթե ողջ քաղաքը. հրեաներն այս ահագին ամբոխը տեսնելով նախանձից դրդված սկսում են հակաճառել Պողոսին և նուլնիսկ հայհոյել։ Բայց Պողոսն ու Բառնաբասը անվերկյուղ ու համարձակ ասում են հրեաներին.

— Նախ ձեզ մոտ պիտի ասվեր Աստուծո խոսքը, բայց քանի որ դուք մերժում եք և ձեզ արժանի չեք համարում հավիտենական կյանքին, մենք էլ այսուհետև մեր քարոզությունն ուղղում ենք դեպի հեթանոսները։

Հրեաները քաղաքի ազդեցիկներին ու պաշտոնյաներին գրգռում են Պողոսի և Բառնաբասի դեմ ու հալածանք հարուցում. սրանք էլ զայրացած թողնում, հեռանում են քաղաքից և գնում Իկոնիոն։ Այստեղ էլ սկսում են ժողովրդին ավետարանել և Տեր Հիսուսի մասին խոսել։ Հրեաներից ու հույներից շատերն ընդունում են նրանց քարոզությունը։ Երկար ժամանակ նրանք հաջողություն են ունենում այստեղ։ Բայց այստեղ էլ հրեաները հեթանոսներին գրգռում են Պողոսի ու Բառնաբասի դեմ։ Ժողովրդի մեջ հերձված է ընկնում. մի մասը հրեաների կողմն է անցնում, մյուսը՝ առաքյալների։ Վերջում հակառակորդները, հրեա թե հեթանոս, որոշում են քարկոծել նրանց։ Առաքյալները փախչում են Լիկայնացոց Լյուստրա և Դերբե քաղաքները և այնտեղ շարունակում իրենց առաքելական քարոզչությունը։ Այստեղ նրանց գործը հաջող է գնում, որովհետև երբ առաքյալներին հաջողվում է մի կաղ մարդու բժշկել, ամբողջ քաղաքը նրանց աստվածների տեղ է ընդունում և պատրաստվում աստվածավայել դիմավորելու. Բառնաբասն ու Պողոսը հազիվ կարողանում են նրանց այդ մտադրությունից ետ պահել ու հասկացնել, որ իրենք էլ նրանց նման մահկանացու մարդիկ են և եկել են միայն Աստուծո խոսքը քարոզելու և Տեր Հիսուսի մասին ավետարանելու։

Երբ այս երկու առաքյալներն շրջելով ուսուցանում էին, Անտիոքից և Իկոնիոնից գալիս են մի խումբ հրեաներ, որոնց հետ առաքյալները համարձակորեն վեճի են բռնվում։ Եկողներին հաջողվում է ժողովրդին իրենց կողմը գրավել՝ առաքյալների քարոզածները սուտ հայտարարելով։ Պողոսը քարկոծվում և մահացած համարվելով քաղաքի պարիսպներից դուրս է նետվում։ Պողոսի աշակերտները նրան գտնելով նորից քաղաք են բերում, որտեղից վաղ առավոտյան Բառնաբասի հետ միասին ճանապարհում են Դերբե։ Ավետարանելով այս քաղաքում և շատերին հավատացյալ դարձնելով, վերադառնում են նրանք Լյուստրա, Իկոնիոն և Անտիոքիա։ Այստեղ նրանց հաջողվում է հավատացյալների նոր համայնքներ կազմել և նրանց համար երեցներ ձեռնադրել, որպեսզի իրենց գործը շարունակեն։ Ապա շրջելով Պեսիդիայի կողմը անցնում են Պամփիլիա։ Պերգեում քարոզելուց հետո իջնում են Ատտալիա, որտեղ նավ նստելով ուղևորվում են Սելևկիա ու այնտեղից էլ նորից Անտիոք, որտեղից ուղարկվել էին այս առաքելական պտույտի համար, որ և

մեծ հաջողությամբ կատարում են, ամենուրեք շեշտելով, թե հեթանոսների առաջ ևս բացվել են հավատի դռները։ Միառժամանակ նրանք մնում են Անտիոքում ու քարոզչական նպատակով շրջում իրենց աշակերտների հետ։

## ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ

Այդ օրերին Հրեաստանից մի քանի հոգի Անտիոք գալով ասում են, թե հեթանոսները քրիստոնյա դառնալիս պետք է անպայման թլպատվեն Մովսեսի դրած օրենքի համաձայն։ Եվ որովհետև այս խնդրի շուրջը վեճ ծագեց մի կողմից Պողոսի ու Բառնաբասի, իսկ մյուս կողմից Հրեաստանից եկած անձանց միջև, դրա համար էլ որոշվեց, որ Պողոսն ու Բառնաբասը և մի քանի այլ մարդիկ գնան Երուսաղեմ, առաքյալների ու տեղի երեցների հետ միասին այդ խնդիրը վերջնականապես լուծելու։ Անցնելով Փյունիկիայով և Սամարիայով նրանք հասնում են Երուսաղեմ, որ փառավոր կերպով ընդունվում են ամբողջ քրիստոնյա համայնքի կողմից՝ Քրիստոսի առաքյալների ու երեցների գլխավորությամբ։ Պողոսն ու Բառնաբասը մանրամասն պատմում են հեթանոսների շրջանում կատարած իրենց գործունեության մասին, բայց փարիսեցիների հերձվածից նորադարձ հավատացյալները պահանջում էին, որպեսզի հեթանոսները քրիստոնյա դառնալիս անպայման թլպատվեն ու Մովսեսի դրած բոլոր օրենքները կատարեն։

Այս առթիվ Քրիստոսի առաքյալներն անհրաժեշտ են համարում մի ժողով գումարել Երուսաղեմում՝ հարուցված վեճը վերջնականապես լուծելու համար։ Այս առաքելական ժողովը գումարվում է 52 թվին։ Ժողովում Պետրոս ու Հակոբոս առաքյալները հանդես գալով պաշտպանում են այն միտքը, թե հեթանոսությունից դարձածները չպետք է թլպատվեն ու Մովսեսի դրած օրենքները կատարեն, որովհետև Հիսուսին հավատալով ու մկրտվելով, նրանք բոլորովին արդարանում են, հետևապես և նոր պարտավորություններ չպետք է դրվեն նրանց վրա, այլ պետք է միայն պատվիրել, որ հրաժարվեն մի քանի հեթանոսական սովորություններից, կուռքերի անունով զոհված մսից, արյունից չճաշակեն և պոռնկությունից հեռու մնան։ Այս իմաստով ժողովի կողմից մի թուղթ է հղվում Անտիոքի, Սիրիայի և Կիլիկիայի հեթանոսությունից քրիստոնյա դարձածներին ուղղված. այս թուղթը ժողովի կողմից հղվում է երկու հոգու— Հուդայի և Շիղայի միջոցով. սրանք միանալով Պողոսին ու Բառնաբասին, մեկնում են Անտիոք և այստեղ նորադարձ համայնքին իրազեկ դարձնելով թղթի բովանդակությանը՝ մեծապես մխիթարում նրանց։

## ՊՈՂՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Պողոս առաքյալը որոշում է մի շրջագայություն կատարել իր հաստատած համայնքների շրջանում։ Այս նպատակով իր հետ վերցնում է Շիղային ու Անտիոքից ճանապարհ ընկնում Ասորիքի ու Կիլիկիայի կողմերը, ուր ընդարձակում է առաջուց հիմնած համայնքները։ Ապա գնում են Դերբե և Լիստրա, որտեղից իրենց հետ վերցնելով Պողոսի նախկին աշակերտ Տիմոթեոսին, որոշում են առանց որևէ տեղ կանգ առնելու Փռյուգիայի և Գաղատիայի վրայով անցնել Տրոադա և այնտեղից էլ Մակեդոնիա։ Կոզոմնիա քաղաքում մի քանի օր դադար են առնում։ Այստեղ Լիդիա անունով մի ծիրանավաճառ կին առաջինն ընդունում է Պողոսի քարոզությունները, հավատում ու մկրտվում։ Բայց այստեղ էլ հակառակորդներ են հայտնվում, որոնց նյութական շահերին սպառնում էր նոր վարդապետը։ Սրանք բռնելով Պողոսին ու Շիղային, քաշ են տալիս հրապարակը, քաղաքի մեծամեծների ու զորագլուխների մոտ և մեղադրում, թե սրանք խռովություն են բարձրացնում քաղաքում ու իրենք հրեա լինելով, մեզ մի նոր կրոն են քարոզում, որը մեզ համար անընդունելի է, քանի որ մենք հռոմայեցի ենք։ Ժողովուրդը խռնվում է նրանց գլխին, իսկ զորագլուխները հրամայում են ծեծել ու բանտ նետել և աչալրջությամբ հսկել։ Պողոսը և Շիղան գիշերն աղոթքով են անցկացնում, որին ունկնդրում են նաև բանտում եղած կալանավորները։ Հանկարծակի երկրաշարժից բանտը հիմքից շարժվում է և նրա դռները բացվում են, բայց Պողոսն ու Շիղան չեն փախչում. այս դեպքից զարմացած, բանտապետը նրանց սրբի տեղ ընդունելով հավատում է նրանց քարոզած Հիսուս Քրիստոսին և մկրտվում իր տան բոլոր անդամների հետ միասին ու նրանց էլ փոխադրում իր տունը և պատվում։ Առավոտյան զորագլուխները մարդ են ուղարկում բանտապետի մոտ, որ Պողոսին ու Շիղային ազատ արձակեն, բայց Պողոսն իր արժանապատվությունը պահելով ասում է.

— Մեզ, անմեղ հռոմայեցիներիս հրապարակով ծեծեցին, բանտ նետեցին և այժմ էլ սուս ու փուս ուզում են բանտից հանել. ո՛չ այդպես չենք ուզում, թող գան և իրենք հանեն մեզ բանտից։

Երբ զորապետները լսում են, որ նրանք հռոմայեցի են, այսինքն հռոմեական կայսրության քաղաքացի, որոնց հռոմեական օրենքով իրավունք չուներին ծեծելու, սաստիկ վախենում են և գալով, խորապես ներողություն են խնդրում ու աղաչում, որ հեռանան իրենց քաղաքից։

Հեռանալով Կողոմնիայից նրանք հասնում են Թեսաղոնիկե։ Այստեղ ըստ սովորության Պողոս առաքյալը մտնում է հրեաների մոտ և ս. Գրքի վրա հենվելով ապացուցում, որ խոստացված Մեսիան՝ Հիսուս Քրիստոսը եկել է և մարդկանց փրկելու համար չարչարվել, թաղվել ու ապա հարություն առել. հրեաներից ոմանք, իսկ հեթանոսներից շատերը հավատում են նրան։ Ազդեցիկ հրեաները նախանձից դրդված խռովում են ամբողջ քաղաքը և մտնելով այն տունը, ուր իջևանել էին նրանք, տակն ու վրա են անում, Պողոսին ու Շիղային գտնելու համար։ Բայց չգտնելով, տանտիրոջն ու հավատացյալներից ոմանց քաշ են տալիս քաղաքապետի մոտ և ամբաստանում նրանց՝ թե կայսեր հրամաններին հակառակ են գործում, ասելով որ Հիսուս թագավոր է։ Վտանգը կանխահաս համարելով, քաղաքի հավատացյալները գիշերով Պողոսին ու Շիղային փախցնում են։

Այնուհետև Պողոսին հանդիպում ենք Աթենքում, ուր նա շարունակ հանդիպումներ էր ունենում հրեաների ու հեթանոսների հետ ու նրանց Հիսուսի ավետարանը քարոզում։ Հեթանոսներից շատերը, մանավանդ եպիկուրյան ու ստոյիկյան փիլիսոփաները հաճախ էին Պողոսի հետ նոր վրոնի, նոր դավանանքի շուրջը վեճի բռնվում, այնպես որ վերջիվերջո նրան տանում են Արեոպագոս և հրավիրում խոսել նոր վարդապետության մասին։ Այստեղ Պողոսը դիմելով աթենացիներին, պատմում է, որ ինքը մանգալով Աթենքի բոլոր մեհյանները գտել է մի բագին, որտեղ գրված էր՝ «Անծանոթ աստծուն»։ Իրեն հատուկ հմտությամբ այս երկու բառը բնաբան ընտրելով, նա հայտնում է, որ ինքը եկել է հենց այդ Անծանոթ աստծու մասին խոսելու. ապա նա բացատրում է միաստուածության գաղափարը՝ նշավակելով ճարտար մարդկանց ձեռքով շինված մեհյանների ու կուռքերի սնոտի պաշտամունքը և հորդորում դառնալ դեպի կենդանի Աստված, դեպի բոլոր արարածների Արարիչը, որն իր որդուն ուղարկեց աշխարհը փրկելու և հավիտենական դատապարտությունից ազատելու. մարդիկ խաչեցին Փրկչին, բայց Աստուած հարություն տվեց նրան մեռելներից։ Երբ ունկնդիրները լսեցին մեռելների հարության մասին, սկսեցին ծաղրել նրան։

Աթենքում հավատացյալների որոշ շրջան ստեղծելուց հետո, Պողոս առաքյալը թողնում ու հեռանում է Կորնթոս։ Այստեղ նա ծանոթանում է վրանագործ մի ընտանիքի հետ և որովհետև ինքն էլ համարվեստ էր, սկսում է նրանց հետ միասին աշխատել և դրանով իր ապրուստը հոգալ. իսկ շաբաթ օրերին միշտ քարոզությամբ էր զբաղվում ու հրեաներից և մանավանդ հեթանոսներից շատերին հավատացյալ դարձնում։ Այդ օրերին Տիմոթեոսն ու Շիղան Մակեդոնիայից գալիս են Կորնթոս՝ Պողոս առաքյալի մոտ։ Սրանց գալուց հետո նա ավելի շատ է զբաղվում քարոզությամբ, բայց որովհետև հրեաների կողմից ընդդիմության է հանդիպում և նույնիսկ հայհոյանքի առարկա դառնում, զայրանալով նզովում է նրանց ու երես դարձնելով՝ ամբողջովին շրջվում հեթանոսների կողմը։ Սրանց մոտ քարոզության գործն այնքան հաջող է գնում, որ տարի ու կես մնում է այնտեղ և շարունակ ուսուցանում։ Այնուհետև Պողոս առաքյալը նավում է դեպի Եփեսոս՝ այդ շրջանի իր հաստատած նորադարձ համայնքներն այցելելու համար։ Այստեղ տեսնվում է տեղի հրեաների հետ, որոնք աղաչում են նրան, որ երկար մնա իրենց մոտ, բայց նա ստիպված հրաժարվում է, խոստանալով հետագայում նորից այցի գնալ։ Եփեսոսից անցնում է Կեսարիա, այնտեղից էլ Անտիոք։

(Շարունակելի)

ՁԵՄԱՐԱՆՑԻ